Պետրոսյան Ռաֆիկ Գ.
Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ, իրավաբ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան

Պետրոսյան Գարեգին Տ.
ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի օգնական, ՀՀ պետական ծառայության առաջին դասի խորհրդական, իրավաբ.գիտ.թեկնածու

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԻԱՐ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Սույն հետազոտությունը նպատակ ունի ՀՀ դատարաններին և իրավակիրառ մյուս սուբյեկտներին ծանոթացնել իրավունքում և օրենսդրության մեջ առկա իրավական բացերի հաղթահարման գործում իրավունքի սուբսիդիար (օժանդակ, լրացուցիչ) նորմերի հասկացությանը և էությանը, կիրառման անհրաժեշտ նախադրյալներին ու պայմաններին, իրավունքի սուբսիդիար նորմերի և իրավական բացերի հաղթահարման համանմանության (անալոգիայի) տարբերություններին:

Քննարկվող ինստիտուտը քիչ հայտնի է ՀՀ իրավագիտության տեսությանը և սույն հոդվածն օգտաշատ կարող է լինել դատական և իրավակիրառ պրակտիկայի համար:

Հիմնաբառեր. սուբսիդիար նորմեր, իրավական բացեր, բացերի հաղթահարում, համանմանություն (անալոգիա), ներծյուղային կարգավորում, հարակից ճյուղ, սկզբունքներ, դրույթներ:

Ներածություն

Հեղինակները համանմանության և իրավունքի սուբսիդիար նորմերի կիրառման ինստիտուտների մասնավոր՝ իրավահամեմատական ուսումնա–

սիրության և իրավավերլուծական մեթոդաբանության օգնությամբ ժխտում են իրավունքի տեսության մեջ և դատական պրակտիկայում այդ ինստիտուտների նույնացումը և իրավական բացերի առկայությամբ իրավակիրառ սուբյեկտներին կողմնորոշում են համանմանության կիրառման անհնարինության դեպքում դիմել իրավունքի նորմերի սուբսիդիար կիրառման եղանակի օգնությանը:

Իրավունքի նորմերի սուբսիդիար կիրառման հասկացությունը

Իրավական բացերի հաղթահարումը կատարվում է ոչ միայն նորմաստեղծ սուբյեկտների իրավաստեղծ գործունեության ու կոնֆլիկտային իրադրություններում համանմանության (անալոգիայի) հիմնական ինստիտուտի կիրառման, այլ նաև իրավունքի նորմերի սուբսիդիար և գործարար շրջանառության սովորույթների կիրառման օժանդակ եղանակներով:

«Սուբսիդիար» եզրույթը լատիներենից թարգմանաբար նշանակում է «օժանդակ», «պահեստային», «պաշարում պահվող» (Дворецкий, 1976, էջ 969): Իրավունքի (դրա նորմերի) սուբսիդիար կիրառման տակ սովորաբար հասկացվում է կոնկրետ գործի լուծումը իրավունքի այլ հարակից (սահմանակից) ճյուղի բովանդակությամբ և իմաստով մոտ նորմի (նորմերի) լրացուցիչ կիրառումը: Սակայն, իրավագետներն այդ եզրույթին հաճախ վերագրում են տարբեր իմաստներ, այն է՝ ա)իրավունքի որևէ ճյուղում իրավական բացը վերացնելու համար իրավակիրառ մարմնի կողմից մեկ այլ՝ հարակից իրավունքի ճյուղի նորմի կիրառում (Аленина, 2002, էջ 130, Боннер, 2005, էջեր 396–400, Боннер, 2005, էջեր 388–395, Лушникова, Лушников, Тарусина, 2001, էջեր 272–291), բ)իրավունքի նորմի այնպիսի կիրառում, երբ որոշակի նորմեր կարգավորում են ոչ միայն իրավունքի այն ճյուղի հարաբերությունները, որոնց դրանք պատկանում են, այլ նաև ուղղակիորեն կարգավորում են հարակից իրավունքի ճյուղի հարաբերությունները (Божок, 2005, էջ 142), գ)նորմի սուբսիդիար կիրառումը նույնն է, ինչ-որ համանմանության կիրառումը (Алексеев, 1971, էջեր 333–334), դ)դա օրենսդրական բացի պայմաններում միջճյուղային համանմանություն է, որի կիրառմամբ իրավունքի մեկ ճյուղի նորմը փոխադրվում է իրավունքի մեկ այլ ճյուղի չկարգավորված հարաբերությունների վրա (Спектор, 2003, էջեր 16–17):

Իրավունքի նորմերի սուբսիդիար կիրառման նախադրյալները

Մեր կարծիքով՝ նորմերի սուբսիդիար կիրառման և համանմանության նույնացումը ժխտվում է թեկուզև նրանով, որ օրենքի կամ իրավունքի համանմանության կիրառման դեպքում այն սահմանափակվում է իրավունքի նույն ճյուղի (ներճյուղային) նորմերի կամ իրավունքի ներճյուղային սկզբունքների կիրառմամբ, հետևաբար՝ այս դեպքում «սուբսիդիար» եզրույթի կիրառումն անհրաժեշտ չէ: Մանավանդ որ, իրավագետների դասական աշխատություններում մատնացույց չի արվում համանմանության կի-

րառման բացառապես ներծյուղային բնույթը: Բացի այդ, օրենսդիրը շատ հաճախ իրավունքի սուբսիդիար կիրառում նախատեսում է ոչ թե միայն իրավունքի բացի դեպքում, այլ՝ իրավունքի նույն նորմերի գոյությունը իրավունքի տարբեր ճյուղերում չկրկնելու համար: Բացի նշվածները, ըստ Դ.Թումանովի՝ չի կարելի խոսել նաև իրավունքի մեկ ճյուղի նորմերը իրավունքի մեկ այլ (սահմանակից) հարաբերությունների վրա փոխադրելու մասին, քանի որ սուբսիդիար նորմերը գործում են անմիջականորեն և հարակից ճյուղի հարաբերությունները կարգավորում են անմիջականորեն (Туманов, 2008, էջ 94): Այսպիսով, պետք է ասել, որ իրավունքի սուբսիդիար կիրառումը միասնականացնում է իրավական կարգավորումը, որովհետև կանխում է կարգավորման առարկայով և ձևավորման մեթոդով նման հարաբերությունները կարգավորող նորմերի կրկնությունը, այն բացառապես չի սահմանափակվում իրավական բացերի հաղթահարմամբ, քանի որ կարող է տեղի ունենալ նաև այն դեպքերում, երբ օրենսդրության մեջ նաև բացեր չկան (Абрамова, 1998, էջեր 4, 7, Бару, 1963, էջ 17, Карташов, 1980, էջ 30, Черданцев, 1972, էջեր 148–152): Օրինակ՝ իրավունքի բոլոր ճյուղերում էլ ընդհանուր են «հայց», «վնաս», «բարոյական վնասի հատուցում», «պարտավորությունների բարեխիղճ կատարում» և այլ դրույթների բովանդակությունները, ուստի դրանք կարող են տեղ գտնել իրավունքի միայն մեկ (քաղաքացիական) ճյուղում և իրավունքի մյուս ճյուղերում դրանք կրկնելու անհրաժեշտություն չկա: Նման դրույթների սուբսիդիար կիրառումը կրում է մշտական բնույթ:

Այն, որ իրավունքի սուբսիդիար կիրառումը իրավունքի տեսության մեջ և իրավակիրառ պրակտիկայում համարվում է իրավական բացերի հաղթահարման ինքնուրույն ինստիտուտ, հաստատվում է նաև դրա կիրառման յուրահատուկ հանգամանքների, նախադրյալների և պայմանների առկայությամբ: Այն կիրառելու համար անհրաժեշտ են հետևյալ հանգամանքները՝

- հարաբերությունը, որի նկատմամբ կիրառվում է իրավունքի մեկ այլ ճյուղի նորմը, կարգավորված չլինի իրավունքի տվյալ ճյուղի նորմերով, այսինքն՝ օրենսդրության մեջ առկա լինի բացը,
- կարգավորման ենթակա և արդեն կարգավորված հասարակական հարաբերությունները նման լինեն իրար,
- նմանություն պետք է լինի նաև իրավական կարգավորման մեթոդում:

Վերը թվարկված հանգամանքները վկայում են, որ սուբսիդիար կիրառում կարող է տեղի ունենալ միայն իրենց բնույթով, գենետիկ փոխկապակցվածությամբ նույնանման երկու հարակից ճյուղերի միջև: Իրավունքով կարգավորված և չկարգավորված հարաբերություններն այնքան մոտ պետք է լինեն, որ ապահովեն հարակից ճյուղերի իրավական կարգավորման մեթոդների նմանությունը: Այլ խոսքով՝ սուբսիդիար կիրառումը հնարավոր է, երբ ընդհանուր ձևակերպված իրավական կարգավորման մեթոդը չի հակասում այն նորմի իրավական կարգավորման մեթոդին, որը նա-

խատեսված է այլ ճյուղի, ենթաճյուղի, ինստիտուտի նման հարաբերության կարգավորման համար (Спектор, 2003, էջեր 80–81):

Այսպիսով՝ իրավունքի նորմի սուբսիդիար կիրառման համար անհրաժեշտ նախադրյալները հետևյալներն են՝

- կոնկրետ հարցեր լուծելիս հնարավոր է ոչ միայն հարակից իրավունքների, այլ նաև դրանց նման ինստիտուտների սուբսիդիար կարգավորում, օրինակ՝ քրեորեն հետապնդելի արարք կատարելու և վնաս պատճառելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է նաև քաղաքացիական դատավարության կարգով գործ քննող դատարանի համար, որը կարող է սոսկ որոշել այդ վնասի չափը,
- սուբսիդիար կիրառում թույլատրելի է, երբ օրենքով չկարգավորված դեպքում հարակից ճյուղում առկա է նման հարաբերություն նախատեսող նորմ, այսինքն՝ կիրառումը կատարվում է կոնկրետ գործով նորմի կամ նորմերի խմբի հիման վրա,
- իրավունքի համապատասխան ճյուղերի հիմքում ընկած են ընդհանուր սկզբունքներ և դրույթներ,
- իրավունքի նորմերի սուբսիդիար կիրառում հնարավոր է միայն տվյալ նորմով նախատեսված հատկանիշների նույնության և լրիվ նմանության դեպքում:

Նորմերի սուբսիդիար կիրառման պայմանները

Բացի վերը թվարկված նախադրյալներից, հարակից իրավունքի ճյուղերում սուբսիդիար կիրառումը թույլատրվում է որոշ պայմաններ պահպանելու դեպքում: Սուբսիդիար կիրառման համար, օրինակ, անհրաժեշտ է բացահայտել չկարգավորվող հարաբերություններում և դրանց միջնորդավորման եղանակներում առկա նմանությունը: Այսպես՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն ընտանեկան օրենսդրությամբ չկարգավորվող գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը փաստորեն կարող է կիրառվել անսահմանափակ ձևով, իհարկե, եթե դա չի հակասում ընտանեկան հարաբերությունների էությանը: Վերջին դրույթը սահմանված է այն պատճառով, որովհետև մի շարք դեպքերում ընտանեկան հարաբերություններն ունեն յուրահատկություններ: Օրինակ՝ ընտանեկան իրավունքում կիրառելի չեն հատուցանելի շուկայական հարաբերությունները, ընդհանրապես վնաս պատճառելու և մասնավորապես՝ ալիմենտ չվճարելու դեպքերում պատճառված վնասի և այլ դեպքերը: Մինչդեռ, օրինակ, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 5-րդ բաժնի նորմերը, որոնք վերաբերում են ընտանիքի անդամների ալիմենտային պարտավորություններին, ընտանիքի կազմի որոշման հարցում սուբսիդիար կերպով կարող են կիրառվել նաև կենսաթոշակային օրենսդրության մեջ, եթե վեճը վերաբերում է կերակրողին կորցնելու կապակցությամբ նշանակվող կենսաթոշակներին, որովհետև երկրորդ դեպքում ընտանիքի անդամների շրջանակը սահմանված է ավելի

նեղ, քան ընտանեկան իրավահարաբերություններում: Մինչդեռ կերակրողին կորցնելու դեպքում եղբայրը, քույրը, թոռները, պապը և տատը հանգուցյալի գծով կենսաթոշակ ստանալու իրավունք են ձեռք բերում միայն այն դեպքում, երբ չկան (բացակայում են) օրենքով նրանց պահելու պարտականություն ունեցող անձինք (Պետական կենսաթոշակների մասին ՀՀ օրենքի 13, 26, 29, Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածներ): Ուրեմն՝ կենսաթոշակի ստացման համար հանգուցյալի խնամքի տակ գտնվող անձինք կարող են դիմել դատարան, որպեսզի վերջինս կենսաթոշակի իրավունք առաջացնող նորմի սուբսիդիար կիրառման համար դիմի ընտանեկան օրենսդրությանը, այսինքն՝կենսաթոշակային իրավունքի սուբյեկտ ճանաչի նաև հանգուցյալի խնամքի տակ գտնվող անձանց (Պետրոսյան, 2012, էջեր 453-454):

Սույն աշխատանքի հեղինակները հատուկ ուսումնասիրության առարկա են դարձրել նյութական իրավունքի օրենսգրքերի այն դրույթները, որոնք իրավական նորմերի սուբսիդիար կիրառություն են նախատեսում քաղաքացիական դատավարական իրավահարաբերություններում: Նման հետազոտումից պարզ է դարձել, որ քաղաքացիական դատավարության համար սուբսիդիար կիրառման աղբյուրներ են նաև նյութաիրավական հարաբերությունները կարգավորող օրենքները, որոնք առանձին կատեգորիայի քաղաքացիական գործերի քննության և լուծման յուրահատկություններ նախատեսող դատավարական նորմեր են պարունակում. ՀՀ քաղ.օր-ը, ՀՀ ընտ. օր-ը, ՀՀ աշխ.օր-ը ՀՀ հող. օր-ը, ՀՀ վարչ. օր-ը, ՀՀ սահմանադրական օրենք ընտրական օրենսգիրքը, Դատախազության մասին ՀՀ օրենքը, Զանգվածային լրատվության մասին ՀՀ օրենքը, Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին ՀՀ օրենքը, ՀԿ-ների մասին ՀՀ օրենքը, Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքը, Համատիրության մասին ՀՀ օրենքը, Սնանկության մասին ՀՀ օրենքը, Քաղաքացիության մասին ՀՀ օրենքը, Հեռուստատեսության և ռադիոյի մասին ՀՀ օրենքը և բազմաթիվ այլ օրենքներ: Դրանցում հիմնականում սահմանված են դրանց կողմից կարգավորվող հարաբերություններից ծագած վեճերի դատական ենթակայությունը և ընդդատությունը կամ առանձին կատեգորիայի գործերի քննության և լուծման առանձնահատկությունները: Այսպես՝ Քաղ. օր-ն է սահմանում քաղաքացիական իրավունքների պաշտպանության ձևերը (հոդվ. 13), անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու, քաղաքացուն անգործունակ ճանաչելու հիմքերը (30 և 31 հոդվածներ), գույքը տիրազուրկ ճանաչելու հիմքերն ու կարգը (հոդվ. 178), անտնտեսվար պահվող մշակութային արժեքները վերցնելու հիմքերը (հոդվ. 284), գործարքների ձևը չպահպանելու և վկաների ցուցմունքներն արգելելու հետևանքները (հոդվ. 298), հայց հարուցելու դեպքում հայցային վաղեմության ժամկետն ընդհատվելու հիմքերը (հոդվ. 340), քաղաքացիների և իրավաբանական անձանց պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության գործերով ապացուցման պար-

տականությունը դնում է արատավորող տեղեկություններ տարածող անձի վրա, (հոդվ. 1087) և այլն:

ՀՀ ընտ. օր-ը նույնպես դատավարական բնույթի մեծ թվով նորմեր է պարունակում: Դրա 13-րդ հոդվածը սահմանափակում է ամուսնու իրավունքը՝ ամուսնալուծության գործ հարուցելու կնոջ հղիության ընթացքում, 15-րդ հոդվածը՝ ամուսնալուծության կարգը ՔԿԱԳ մարմիններում, 16-րդ հոդվածը որոշում է ամուսնալուծության կարգը դատարանում, իսկ 20-րդ հոդվածը սահմանում է հայրությունը դատարանում որոշելու կարգը և թույլատրում է օգտագործել ցանկացած ապացույցներ, որոնք ստույգ հաստատում են, որ տվյալ երեխան սերվել է որոշակի անձից: Նույն օրենսգրքի 59-ից 60 հոդվածները մի շարք դատավարական կանոններ են սահմանում ծնողական իրավունքներից զրկելու և այդ գործերի դատական քննության մասին, իսկ 68-72 հոդվածները՝ ալիմենտների գանձման կարգի մասին և այլն:

Իրավունքի նորմի (նորմերի) սուբսիդիար կիրառման դեպքեր առկա են ոչ միայն ներպետական, հատկապես՝ մասնավոր իրավահարաբերություններում, այլ նաև միջազգային իրավունքում, հատկապես՝ միջազգային պայմանագրային ոլորտում: Այդպիսի կիրառման ինքնուրույն տեսակ է, օրինակ, կոլիզիոն հարցերի լուծման կանոններն ու եղանակները, որոնք արտահայտվում են ներպետական և միջազգային նորմերի միջև հակասություններ լինելու դեպքում՝ կիրառման ենթակա օրենքի ընտրության ձևով: Այսպես՝ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը: Կոլիզիոն նորմերի կիրառման համապատասխան ցուցումներ (դրույթներ) են պարունակում նաև ՀՀ օրինակարգված ակտերը՝ ՀՀ քաղ. օր-ը (գլ. 81), Քաղ. դատ. օր-ը (գլ.59), ՀՀ քր. օր 14-րդ հոդվածի 5-րդ մասը, ՀՀ ընտ.օր-ը (բաժին VII) և այլն:

Միջազգային պայմանագրերում կարևորագույն նշանակություն ունեն ազգային օրենսդրության սուբսիդիար կիրառմանը վերաբերող նորմերը: Օրինակ՝ ՄԱԿ-ի «Միջազգային առուվաճառքի վերաբերյալ պայմանագրերի մասին» Վիեննայի 1980թ. կոնվենցիան թվարկում է այն դեպքերը, երբ թույլատրվում է ազգային իրավունքի սուբսիդիար կիրառում (7-րդ հոդվ. 2-րդ կետ):

Իրավունքի նորմերի սուբսիդիար կիրառման նշանակությունը

Պետք է նշել, որ սուբսիդիար կիրառման նշանակության վերաբերյալ ևս իրավագետները միակարծիք չեն, որի հետևանքով և նրանք այդ երևույթին վերագրում են տարբեր հատկանիշներ:

Ըստ Վ. Ի. Կարտաշովի՝ նորմերի սուբսիդիար կիրառումը ոչ այնքան բացերի հաղթահարման միջոց է, որքան հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման միջոց, որի առկայությունը պայմանավորված է գոյություն ունեցող իրավաբանական միջոցներից օգտվելու

նպատակահարմարությամբ: Նման կարծիքի հետ դժվար է համաձայնվել, որովհետև սուբսիդիար կիրառումը, ճիշտ է՝ իրավունքի այլ ճյուղի նորմերով, բայց բոլոր դեպքերում ուղղված է իրավունքի տվյալ ճյուղում առկա բացի հաղթահարմանը:

Ըստ Ե.Ի.Սպեկտորի՝ հատուկ ուշադրության է արժանի այն, որ իրավունքի սուբսիդիար կիրառում ընտրելիս առաջին հերթին պետք է հաշվի առնել իրավունքի այն ճյուղին յուրահատուկ սկզբունքները, որոնց թվին փաստորեն դասվում են այդ նորմերը» (12. Էջեր 80–81): Մինչդեռ, սուբսիդիար կիրառման հարցում օրենսդիրը, մեր կարծիքով, նշանակություն չի տալիս, թե ո՞ր իրավունքի՝ իրավահարաբերության պատկանելիության՞ն, թե՞ սուբսիդիար կիրառման սկզբունքներին է նշանակություն տալիս:

Ինչպես արդեն նշվել է, Ս.Ս. Ալեքսեևը սուբսիդիար կիրառումը և համանմանության կիրառումը դիտարկում է որպես հավասարազոր (նույնական) երևույթներ:

Քննադատելով իրավաբանական գրականության մեջ առկա և վերը բերված բոլոր տեսությունները, Դ. Թումանովը համաձայնվում է Դավիթ Ռենեի և Ժոֆրի Սպինոզիի այն տեսակետին, որ իրավունքի մեկ ճյուղից իրավունքի մեկ այլ՝ հարակից ճյուղի իրավահարաբերության կարգավորման վրա նորմի «փոխադրումը» ոչ այլ ինչ է, քան միջճյուղային համանմանություն: Սույն աշխատանքի հեղինակը գտնում է, որ իրավունքի հարակից ճյուղի նորմի (նորմերի) սուբսիդիար կիրառումը ճիշտ է՝ վերջին հաշվով ուղղված է իրավունքի տվյալ ճյուղում առկա բացերի հաղթահարմանը, բայց այստեղ այսպես կոչված՝ «փոխադրում» առկա չէ: Բացի այդ, սուբսիդիար կիրառում կարող է իրականացվել նաև իրավական բացի բացակայությամբ, երբ օրենսդիրն ուղղակիորեն չի ցանկանում նույնանման հարաբերությունների կարգավորումներն իրականացնել իրավունքի տարբեր ճյուղերում, այսինքն՝ խուսափում է օրենսդրական կարգավորման կրկնություններից:

Վերը նշված բնորոշումները հաշվի չեն առնում նաև սուբսիդիար կիրառման որոշակի նախադրյալների առկայության անհրաժեշտությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ելնելով վերոգրյալներից՝ **հեղինակներն առաջարկում են իրավունքի նորմի (նորմերի) սուբսիդիար կիրառման հետևյալ հասկացությունը. «Իրավունքի սուբսիդիար կիրառումը իրավական բացերի հաղթահարման ինքնուրույն եղանակ է, որի դեպքում գենետիկորեն փոխկապակցված և կարգավորման մեթոդով իրար նման իրավունքների մեկ ճյուղի չկարգավորված հարաբերությունն օրենքով հատկապես նախատեսված դեպքերում և որոշակի պայմանների առկայությամբ կարգավորվում է իրավունքի մեկ այլ՝ հարակից ճյուղի նորմերով»**:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Абрамова А.И. (1998). Субсидиарное применение норм судом // Проблемы совершенствования советского законодательства. Труды, N 41, М.
2. Аленина А.В. (2002). Субсидиарное применение норм смежных отраслей к регулированию отношений, входящих в предмет трудового права // Судебно-правовая реформа в Российской Федерации, Сб. науч. трудов, Омск.
3. Алексеев С.С. (1971). Общая теория права. М.
4. Бару М. (1963) О субсидиарном применении норм гражданского права к трудовым отношениям // Советская юстиция, N 14.
5. Божок В.А. (2005). Институт аналогии в гражданском и гражданском процессуальном праве. М.
6. Боннер А.Т. (2005). Субсидиарное применение норм ГПК при рассмотрении уголовных дел // Избранные труды по гражданскому процессу. СПБ.
7. Боннер А.Т. (2005). Субсидиарное применение норм права при разрешении гражданских дел // Избранные труды по гражданскому процессу. СПБ.
8. Дворецкий И.Х. (1976). Латино-русский словарь. М., Русский язык.
9. Карташов В.Н. (1980). Применение права. Ярославль.
10. Лушникова М.В., Лушников А.М., Тарусина А.М. (2001). Единство частных и публичных начал в правовом регулировании трудовых социально-обеспечительных и семейных отношений. Ярославль.
11. Спектор Е.И. (2003). Пробелы в законодательстве и пути их преодоления. Автореф. дисс... канд.юрид.наук. М.
12. Спектор Е.И. (2003). Пробелы в законодательстве и пути их преодоления. Дисс... канд. юрид. наук. М.
13. Туманов Д. А. (2008). Пробелы в гражданском процессуальном праве. Изд. НОРМА, М.
14. Черданцев А.Ф. (1972). Вопросы толкования советского права. Свердловск.
15. Պետրոսյան Ռ.Գ. (2012). Հայաստանի Հանրապետության քաղաքա-ցիական դատավարություն: «Ոսկան Երևանցի» հրատ., Երևան:

Հոդվածը ներկայացվել է գրախոսման՝ 2019թ. մարտի 4-ին
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2019թ. ապրիլի 19-ին

Рафик Петросян
Заведующий юридической кафедрой
Международного университета Евразия,
Доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА
Гарегин Петросян
Помощник председателя Конституционного Суда РА,
Советник 1-го класса Государственной службы,
кандидат юридических наук

СУБСИДИАРНОЕ ПРИМЕНЕНИЕ ПРАВОВОЙ НОРМЫ

Данное исследование имеет цель ознакомить суды и другие правоприменительные субъекты с понятием и сущностью субсидиарных норм в праве и законодательстве, с необходимыми предпосылками и условиями преодоления пробелов в различиях аналогий и субсидиарных (вспомогательных) норм.

Обсуждаемый институт мало известен в теории правоведения РА, и данная статья может быть полезна в судебной и правоприменительной практике.

Ключевые слова. Субсидиарные нормы, правовые пробелы, преодоление пробелов, аналогия, внутриотраслевое регулирование, смежная отрасль, принципы, правовое положение.

Rafik Petrosyan
Head of the Department of Law at Eurasia International University,
Doctor of Law, Full Professor, Honored lawyer of the RA
Garegin Petrosyan
The assistant to the President of RA Constitutional Court,
First Class Adviser of the RA State Service,
Ph.D. in Law

SUBSIDIARY APPLICATION OF LAW NORMS

The article is aimed at representing the concept of law subsidiary (supportive) norms, their essence and conditions and preconditions of the their applicability as well as the differences between law subsidiary norms and overcoming legal gaps of analogy to RA courts and other legal bodies. The given notion is still new in RA legal studies and theories and the article can be beneficial for judicial and law enforcement practice.

Key words: subsidiary norms, legal gaps, overcoming gaps, analogy, inter branch regulation, related branches, principles, provisions.